նելով ձեր ժանգը. ադամանդն այն՝ ո-
րուն հետ զարնուելեցաք՝ մանրելով ցրուե-
լով զձեզ՝ կու մնայ անմաշ։ . . .

Բայց դուք կիրք չարածնունդք՝ որ
բոյն դնելով 'ի սիրտ մարդկան կու ծնա-
նիք ամեն ժամանակ, դու դեղնած նա-
խանձ և դու ժանեւոր զրպարտութիւն,
դուք մինչև ցերբ կու հալածէք զանոնք՝
որոց սրտին մէջ չկայ ձեր տեղն։ — Ե-
թէ քիչ անգամ այդպիսի մեծ անձ կու
գայ յաշխարհ, կամ մէկ միայն Ոսկի-
բերան, սակայն քանի՞ քանի՞ բարեսիրտք
և բարեմիտք՝ ձեր զինուց և ժանեաց
զոհ կ'ըլլան. — քանի՞ բերանք՝ գոնէ ար-
ծաթիք և անուշիկք՝ ձեր շչելոցն՝ համ-
բացան. — քանի՞ մարգարտանման մա-
քուր սիրտք՝ ձեր ցաւէն փշրեցան. —
քանի՞ գրիչք՝ որք երկրիս վրայ կրնային
անչինչ գիծ մը թողու, ձեր բռնութե-
նէն դադրեցան կոտրեցան. — ո՞րքան ճըշ-
մարտութիւնք ձերստութենէն փախըս-
տական եղան և լռեցին իսպառ. — ո՞ր-
քան պայծառ նշոյլք՝ ձեր խաւարին մէջ
թաղուած մնացին. — և ո՞րքան անմահ
մնալու մարդկանց՝ դուք շուտով գերեզ-
ման փորեցիք, կամ թէ ողջ ողջ կո-
ըստեան կափարիչը վրանին կոթնցու-
ցիք։ . . . .

Իսկ դուք ո՞վ աղնիւք, որոց երկինք
շնորհեցին չափով մը՝ Յովհաննու նման-
նութիւնը, — ճշմարտութիւն, հանճար,
գորով և հալածանք. — դուք՝ կշռեցէք ձեր
չափը ձեր կիրքը, և ձեզմէ առջիններուն
կրածը. և եթէ իմ աղգակիցս և արենա-
կիցս այլ էք, յիշեցէք ձեր նախնի Ներ-
սէսները, Մովսէսները, Սահակները,
Եղիշէն, Խոսրովիկն ու Ղազարը. և եթէ
բաւական չեն ձեր այրած սրտին՝ ա-
սոնց կիսաքանդ անայցելու գերեզման-
ներն, եկէք հոս 'ի տարագիր տապան
մեծի Խօսնակին Եկեղեցւոյ. հոս, կամ
չդիմանալով՝ այս կափարչին վրայ դուք
այլ փշրեցէք, և կամ համբերութեամբ
դիմանալով, « փառք քեզ Աստուած յա-
» ղագս ամենայնի » կանչեցէք, ու լռե-
ցէք։ . . . .

Հ. Ղ. Մ. ԱԼԻՇԱՆ

Կը շարունակուի։

ՁՈՐՆ ՅՈՎՍԱՓԱՏՈՒ

Ամենախումբ տօնավաճառ հանդիսի
Անծայրածիր հուսկ հրապարակ մահացուաց.
Ուր մատուցին յատեան վաճառքն անթերի,
Անմահութիւնն երկնից, եւ մահ սանդարաց։

Վաճառականքըն խուռնընթաց կուտեսցին,
Հողմավարեալ զերդ աւազոյ դէզ անթիւ.
Իրաւադատն ինքն անդ Աստուած յարդար գին
Ամենեցուն տացէ զվաճառսըն ճըշդիւ։

Եւ աւանիկ ճեղքեալ ալուցն անդընդոց,
Մինչ այլք անդէն ձեռս ի ճակատ կորակոր
Ստանձնեալ ըզմահ սուղին ի սեաւ վիհ խորոց.

Այլք ժառանգորդք անմահութեան երկնաւոր՝
Աղաւնաթեւ յուղիեան արփիս սըլլացին,
Ցերկուց աստի՝ մեզ ո՞վ ընկեր, ո՞ր բաժին։

Հ. Ա. Ե.